ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 9/8.2

քսանյոթը հունիսի երկու հազար տասներեք թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 12-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 12-րդ ենթակետով Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Սահմանել Երևանի պետական համալսարանում հայցորդների ընդունելության հետևյալ չափանիշները.
   ա) Ունենալ երկու տպագրված հոդված ԲՈՀ-ի կողմից երաշխավորված հանդեսներում;
   բ) Հանձնել քննություն անգլերենից ԵՊՀ հանձնաժողովում
   գ) Ստանալ մասնագիտական ամբիոնի դրական եզրակացությունը
   դ) Ստանալ ղեկավարի գրավոր համաձայնությունը:

2. Հայցորդների ընդունելության փաստաթղթերն ընդունել տարին երկու անգամ. սեպտեմբերի 1-20 և հունվարի 11-30:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ